պարոնայք նախարարներ Ժորդանիան և Ռամիշվիլին դեռ սոյն տարեայ յունիս ամսին յայտարարեցին Քաջազնունիին, Ահարոնեանին ու Խատիսեանին, որ յիշեալ շրջանը ժամանակաւոր կերպով գրաւուած է վրաց զօրքերի կողմից՝ Թիւրքերի ճանապարհը դէպի Թիֆլիս կտրելու նպատակով»:

Վրացիները դէպքը բացատրեցին «Թիւրիմացութեամբ» և խոստացան «համապատասխան հրահանգներ» տալ, բայց իրենց ընթացքը չարունակեցին անայլայլ: Սեպտ. 29-ին Ջամալեանը մի նոր «ամենավճռական բողոք» ևս ուղարկեց վրաց կառավարութեան՝ յայտնելով թէ՝ «մինչև այսօր էլ չարունակում եմ ստանալ տեղեկութիւններ վիճելի գօտու բնակիչների կողմից, որոնք դանդաւում են, որ վրաց իշխանութիւնները զօրակոչ են անում»: Այս բողոքն էլ ունեցաւ նախկինի հետևանքը. սիրալիր խոստում և որդեգրուած գործելակերպի չարունակութիւն:

Յարաբերութիւնները աւելի ևս լարուեցին հոկտեմբերին, երբ, Հայաստանի կառավարութեան բազմաթիւ դիմումների հետևանքով, Թիւրքերը սկսեցին պարպել Լոռի-Փամբակի շրջանը և հայ զօրքերը Դրօի գլխաւորութեամբ, գրաւեցին նրանց թողած հողերը: Վրաց կառավարութիւնը հայերի այդ քայլը դատաւ ապօրինի: Հոկտ. 19-ին Վրաստանի արտաքին գործոց նախարարը ուղարկեց Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Ջամալեանին հետևեալ բողոքագիրը. «Վրաստանի Հանրապետութեան կառավարութիւնը տեղեկացաւ, որ Թիֆլիս նահանգի մէկը մասը՝ Քորէր կայարանից սկսած մինչև սահմանակից կամուրջը, այլ և Սանահինի մօտի շրջանները, սոյն հոկտ. 18-ին, գրաւեալ են հայկական կանոնաւոր զօրքերի առաջին և չորրորդ հրացանաձիգ դնդերի կողմից: Վրաց կառավարութիւնը, որ միշտ պատրաստ է խաղաղ, փոխադարձ համաձայնութեան միջոցով կարգաւորել սահմանների հարցը բարեկամ Հայաստանի Հանրապետութեան հետ, իր պարտականութիւնն է համարում յայտարարելու, որ քանի այդպիսի համաձայնութիւն չի կայացել, հայկական զօրամասերի մուտքը Թիֆլիսի նահանգի սահմաններից ներս վրաց կառավարութեան կողմից կը դիտուի որպէս Հայաստանի կողմից արուած ակներև մի թշնամական քայլ Վրաստանի նկատմամբ»:

Իսկ յաջորդ օրը, հոկտ. 20-ին, Սանահնում կանգնած գրահապատ գնացքների պետ Գոդուաձէն ստացաւ զինուորական նախարարի հրամանը՝ պահանջել հայ զօրամասերից, որ անմիջապէս հեռանան Լոռիից և ամբողջ տարածութիւնը, մէջը լինելով և Շահալին, յանձնեն վրացիներին: Եւ նոյն օրն և եթ Գոդուաձէն հայ սահմանապահ վաշտի հրամանատարի միջոցով Հայաստանի կառավարութեան ուղարկեց հետևեալ հեռագիր-վերջնագիրը. «Հիմնուելով Վրաստանի Հանրապետութեան զինուորական նախարարի № 672 հեռագրի վրա՝ յանձնարարում եմ ձեզ 24 ժամուայ ընթացքում տեղեկացնել ձեր կառավարութեան, որ դուք պէտք է հեռանաք ձեր այժմ գրաւած տեղից Շահալի կայարանից այն կողմը: Սպասում եմ ձեր պատասխանին մինչև 22 հոկտ. ժամը 2 կէսօրից յետոյ»:

Յաջորդ օրը, հոկտ. 21-ին, Գոդուաձէն ստացաւ զինուորական նախարարութեան հետևեալ հեռագիրը. «Վաղը, հոկտ. 22-ին ժամը 12-ին, երկաթուղով ձեզ մօտ են գալիս նահանգային դումարտակի 250 զինուորներ, դէպի Վորոնցովկա է շարժւում զօր. Ցիցիանովի զօրամասը՝ բաղկացած մարտկոցներից և հեծելներից: Զօր. Ցիցիանովի գալուց յետոյ, նա